




ԳԵԹԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՇԱՀԷ ԱՐՔԵՊՍ. ԱԺԷՄԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՕՆԻՆ
(18 Յուլիս 1993 թ.)

Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ, Ամէն:

«Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեացէ ինձ օգնութիւն»:

«Բարձրացուցի աչքերս լեռներուն, ուրկէ պիտի գայ իմ օգնութիւնս»:

Սաղմոսի այս բառերով կը սկսիմ խօսքս, որովհետեւ Պաշտօնակերպութեան տօն է այսօր և սոյն խօսքերը կը հրաւիրեն մեզ վեր մայելու լեռներու, որոնք խորհրդանշիչ են բարձրութեան:

Պաշտօնակերպութեան տօնին առիթով, մեր Եկեղեցին կը յիշեցնէ իր հաւատացեալներուն Աստուարանին մէջ պատմուած դէպք մը, որ կապ ունի լերան բարձունքի մը հետ: Յիսուս, առած իրեն հետ իր առաքեալներէն երեքը՝ Պետրոսը, Յակոբոսը և ասոր եղբայր Յովհաննէսը, բարձրացուց Թափոր լերան գագաթը, ինչպէս կ'ընէր յաճախ, երբ աղօթել ուզէր առանձինն: Սակայն, այս անգամ, երբ Ան կ'աղօթէր, երեք աշակերտները տեսան, որ Յիսուսի հագուստը կը սպիտականար, լոյս կը տարածուէր անոր շուրջ և այդ լոյսին մէջ կ'երևէին երկու մարգարէներ, մին՝ Մովսէս, և միւսը՝ Եղիա:

Պաշտօնակերպութեան տօնը հրաւէր մըն է ուղղուած ամէն քրիստոնեայի, որ, մտան երեք առաքեալներուն, տեսնէ Յիսուսի մէջ իր Աստուածը և, ունենալու համար մտան տեսիլք, բարձրանալու սովորական կեանքի ոլորտէն դէպի բարձունքը հոգևոր կեանքին:

Բարձրանալ աստուածաբնակ լերան բարձունքին, կ'ենթադրէ կոնակ դարձնել երկրի փորձութիւններուն, գեղխութիւններուն, խաբէութիւններուն, կը նշանակէ հեռանալ չարէն, կեղծիքէն, սուտէն, ոճիրէն և կեղտէն, բռնելու համար վերելքի ճամբան, դժուար ճանապարհը, որ կը տանի բարեգործութեան, եղբայրասիրութեան և սիրոյ բարձունքին: Այնտեղ, հաւատքի աչքերը կը տեսնեն Աստուծոյ Որդիին լոյս ներկայութիւնը, սիրոյ թագաւորութեան մէջ. սէր՝ դէպի Աստուած, արարիչը երկնի և երկրի, սէր՝ մտանին հանդէպ, մարդկային համատարած սիրոյ երկնակամարին տակ: Սիրոյ բարձունքին վրայ միայն կը յայտնուի Աստուած և այդ բարձունքէն միայն կը տարածուի մեր սէրը դէպի մեր ընկերը՝ ամբողջ մարդկութիւնը:

Պայծառակերպության տօնը հրաւեր մը կը կարդայ մահ մտքի մարդոց, որ բարձրանան մարդկային միտքի սահմանափակումներէն և կուրութիւններէն դէպի լոյսը աստուածգիտության: Բաւ է որքան դեգերեցաւ Հայ միտքը միութեամբության և ընկերային ունայն տեսութիւններու խաբկանքներուն մէջ: Եօթանասուն տարիներու մտածումի պարտադրուած բանաձևերը, որոնք կը փորձէին գիտութիւն բառին տակ ծածկել հոգին սպաննող իրենց բարբաջանքները և դասակարգային պայքար կոչուած տեսութեամբ բացատրել իրենց աստուածասպան ատերները, թող արմատախիլ ըլլան մեր մտածումէն և չտարտղենք մեր մտածողութիւնը անաստուածութեան քարոզներ կադալով մեր երիտասարդութեան առաջ: Թող հասկնայ վերջապէս Հայ մտաւորականը, թէ երբ մեռնի մարդուն մէջ բնակող Աստուածը, գազանն է, որ կը մնայ միայն: Անաստուածութեան քարոյախօսները թող անդրադառնան վերջապէս, թէ սպաննելով Աստուծոյ երկիւղը, կը մեռցնեն մահ իմաստութիւնը: Իսկ երբ լռէ Աստուծոյ երկիւղէն սկիզբ առած իմաստութիւնը, կը մնայ միայն գայլերու անտառ մը, ուր գիրար կը յոշոտեն գայլացած մարդիկ:

Ժամանակը եկած է այլևս, որ Հայ միտքը բարձրանայ յաւիտենական ճշմարտութիւններուն: Հասաւ օրը, որ բարձրանան աչքերը դէպի երկինք հիացումով և հաւատքի բարձունքէն մային դէպի երկիր սքանչացումով, տեսնելու բնութեան մեծ հրաշքը, որ չի՛ բացատրուիր պատահականութիւններով և չի՛ հասկցուիր տեսութիւններով, որքան ըլլան անոնք գիտական: Երկինքն ու երկիրը հրաշք են և կը բացատրուին միայն մեծ խորհուրդով, որ կը կոչուի արարչագործութիւն: Ամէն բան ունեցած է սկիզբ և պիտի ունենայ վախճան: Ա՛յս է պարզ և լուսաւոր ճշմարտութիւնը, որ կը բարձրացնէ միտքը դէպի աստուածգիտութիւն: Այսօրուան տօնը կը փորձէ տանիլ բանաւոր արարածներս ճշմարտութեան այն բարձունքին, ուր կ'երևի Աստուածութեան լոյսը, որ կը բացատրէ ամէն բան:

Պայծառակերպության տօնը կը հրաւիրէ հաւատացեալները, որ բարձրացնեն իրենց հոգիի աչքերը դէպի մեր լեռներուն վրայ հսկող մեր հին վանքերը և սրբավայրերը, հոն, ուր ապրեցան, ճգնեցան և աղօթեցին մեր Եկեղեցոյ Հայրերը, մեր մեծ վարդապետները, մեր հոգեշունչ քարոզիչները, մեր հոգևոր առաջնորդները՝ մեր Սուրբերը, որոնք ուսուցին մեզ զբանն ճշմարտութեան:

Այս օրը հրաւեր մը ունի բոլոր Հայ հաւատացեալներուն, որ իրենց հոգիով ևս բարձրանան կեանքի չարիքներէն վեր, միտքի մոլորումներէն վեր, հոգեկան ախտերէն վեր, բարձունքի մը, ուր անպայման պիտի տեսնեն լոյսը, այն լոյսը, որ կը ճառագայթէ հաւատքէն, երկիւղածութենէն, այն լոյսը, որ կուգայ Աստուծմէ դէպի մարդը, վերադառնալու համար դէպի Աստուած իբրև աղօթք, իբրև փառաբանութիւն, իբրև սէր:

Այսօր Եկեղեցին կ'ողորմէ իր աչքերը Յիսուսի երկու կողմը երևցող մարգարէներուն: Նախ՝ մարգարէներուն մեծագոյնին՝ Մովսէսի, որ իր ժողովուրդը փրկեց չարին ստրկութենէն, տարաւ դէպի Սինա լեռ, բարձրացաւ վեր, ընդունեց Աստուծոյ ձեռքերէն և վար իջեցուց տասնաբանեայ պատուիրանները, այն ժողովուրդին, որ մոռցած իր Աստուածը, կուրքերու պաշտամունքով էր տարուած: Նոյն մեծ մարգարէն էր, որ անապատի ապաշխարանքէն անցուց իր փրկած ժողովուրդը, տանելու համար զայն անտեալ երկիրը՝ միակ Աստուծոյ պաշտամունքին:

Մեզի ցոյց տալով Մովսէս աստուածատես մարգարէն, մեր Եկեղեցին կ'ողողէ մեր աչքերը դէպի միս այն բարձունքը, որ Աստուծոյ օրէնքն է, որպէսզի մեր կեանքը շողախոտի աստուածային սկզբունքներով, ապաշխարենք, ազատուինք մեղքերու կապանքներէն, հեռանանք սոստ պաշտամունքներէն, չպաշտենք մենք զմեզ, չպաշտենք մարդուն ստեղծած արժէքները, այլ, ընդհակառակը, դառնանք դէպի Աստուած և կեանքի մեր ճամապարհը լուսատրեմք Ամոր պատուիրաններով, որոնք մաքուր ոսկիի մըման փայլուն պիտի ընեն մեր հոգին:

Իսկ միս մարգարէն՝ Եղիամ, որուն կ'ողողուին մեր աչքերը, յանդուգն, կրակի մման այրող այն մարգարէն է, որ ղրկուեցաւ երկիր մաքրելու համար զայն սոստ աստուածներու պաշտամունքէն: Եղիա մարգարէն մախանձախնդիր այն պայքարողն էր, որ պատերազմ յայտարարեց Հրէաստանի թագաւորի օտար կնոջ միջոցաւ իր երկիրը ներխուժող օտար պաշտամունքներուն դէմ և յաղթեց անոնց ոտնձգութիւններուն ազգային իր կրօնքին դէմ: Ան առաջնորդեց իր ժողովուրդը, որ իր հողէն դուրս վտարէ օտարամուտ կրօնքի քարոզիչները և վերականգնէ իր հայրերու Աստուծոյն պաշտամունքը:

Այսօր չենք կրնար լռել դժբախտ այն իրականութեան առջև, որ մեր երկրին մէջ տարածում կը գտնէ: Այլակերպութեան տօնը թող ըլլայ հրաւեր մեր ժողովուրդին՝ հաւատարիմ մնալու իր հաւատքին և իր Եկեղեցիին: Նայեցէք լեռներու բարձունքներու մեր կանգուն և աներուած վանքերուն, որոնք սրբավայր են և գանձատուն մեր հայրերու հաւատքին: Յիշեցէք մեր մահատակները, որոնց արիւնով սրբագործուած է մեր հայրենի հողը: Նայեցէք մեր բլուրներուն և դաշտերուն ցանուած խաչքարերուն և յիշեցէք մեր վարդապետները, հայրապետները և Սուրբերը, որոնք կառուցին մեզի համար հրաշալի բարձունք մը, որ կը կոչուի Հայ Եկեղեցի, և այդ բարձունքին վրայ, լուսաւոր պատկերը գծեցին մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի, որպէսզի բոլոր անոնք, որոնք հոգիով կը բարձրանան դէպի Տէրը, հրաժարին մեղքէն և անոր խաբէութենէն, ապաշխարութեամբ և զոջումով բարձրանան՝ մինչեւ հասնին իրենց Փրկիչը ու խօսին Ամոր հետ իրենց հայրերու լեզուով, իրենց Սուրբերու շարականներով և հոգեշունչ երգերով: Իսկ երբ կը մօտենաք Ա. Սեղանին, ընդունելու համար սրբագործող հաց ու գինին, յիշեցէք, թէ դուք ուխտով կապուած էք, հաւատարմութեա՛ն ուխտով, ձեր Սուրբ Եկեղեցիին: Մտիկ մի՛ ընէք օտար ձայներուն, որոնք կը փորձեն խախտել ձեր հաւատարմութիւնը:

Պաշտօնակերպութեան հրաշքին պատկերը և մեր խորհրդածութիւնները կը տանին մեզ լուրջ մտահոգութեան մը, որ մերն է այսօր մեր Հայրենիքին մէջ: Երևումն է ան օտար քարոզիչներու, որոնք եկած են քրիստոնէայ մեր ժողովուրդին հաւատքը խախտելու: Օտար ձայներ կը լսուին մեր հողին վրայ, որոնք մեր Եկեղեցիի գաւակներուն հաւատարմութիւնը կը փորձեն կապել օտար Եկեղեցիներու և կրօնքներու:

Մի՛ լսէք անոնց, որոնք կը ձգտին գայթակղեցնել ձեզ և քակել ձեր հաւատարմութիւնը Ա. Գրիգոր Լուսաւորիչի Գահէն, կապելու համար զայն օտար հայրապետական Աթոռներու, որոնց հետ մեր պատմութիւնը չունի ոչ մէկ կապ: Պաշտօնակերպութեան այսօրուան տօնը թող ըլլայ հրաւեր մեր ժողովուրդին հաւատարիմ մնալու իր Եկեղեցիին, հիմնուած իր Սուրբերու և Նահատակներու վկայութեան վրայ:

Ականջ մի՛ տաք անոնց, որոնք կը խօսին մեզի Աւետարանին անունով և կը կարծեն, թէ մեր ժողովուրդը պէտք ունի մոիկ ընելու իրենց Աւետարանին: Գոչութիւն չունի Եկեղեցի մը աւելի աւետարանական, քան Հայ Եկեղեցին: Անոնք իրական հովիւները չե՛ն, որոնք պատրաստ են իրենց ամձը զոհելու իրենց ոչխարներուն համար, այլ գողեր, որոնք յափշտակելու փորձեր կ'ընեն Հայ Եկեղեցոյ զաւակները և կտրել զանոնք իրենց ազգային աւանդութիւններէն: Անոնց մենք կ'ըսենք. «Մի՛ խօսիք մեզի Աւետարանի մասին, այլ գացէ՛ք Մատենադարան և պիտի տեսնէք այնտեղ, թէ մեր քսան հազար ձեռագիր մատենաներու քառորդը Աւետարաններն են, բնօրինակուած երկիւղածութեամբ և հաւատքով»: Աւետարանը եղած է մեր լոյսը, մեր մերշնչումը, մեր ուսուցումը, երկմային պատգամը, հոգիի սնունդը, երդման գիրքը, գիրքերուն գիրքը: Դուրսերէն եկած մոր օրերու մարգարէներ թող չխօսին մեզ Աւետարանին անունով, մեր պաշտած, մեր սիրած, մեր բարձրացուցած, մեր համբուրած Աւետարանին անունով:

Տակաւին կան այլ սուտ մարգարէներ մեր երկիրը մտած կողմնակի դուռերէ, որոնք կ'ուզեն խռովել և մոլորեցնել ձեր հաւատքը: Հեռացուցէք զանոնք ձեր աչքերուն առջևէն և դարձեալ ուխտեցէ՛ք հաւատարիմ մնալ ձեր հաւատքին, ձեր աւանդութիւններուն, ձեր լուսոյ խորանին, ձեր Սուրբ Եկեղեցիին:

Այս է պատգամը, որ անգամ մը ևս կը ճաճանշէ մեր Թափոր լեռնէն, մեր սուրբ բարձունքէն, մեր Մայր՝ Ս. Էջմիածինէն: Հաւատարիմ եղէք անոր, հաւատարիմ եղէք և պիտի մնաք բարի և ազնիւ քրիստոնեաներ, ինչպէս ձեր հայրերն էին: Պիտի աղօթէք և ձեր աղօթքին մէջ պիտի գտնէք ձեր մխիթարութիւնը: Պիտի հաւատաք և ձեր հաւատքին մէջ պիտի գտնէք ձեր կեանքի ճշմարտութիւնը: Պիտի բարձրանաք և հոգեկան ձեր բարձունքին մէջ պիտի գտնէք ձեր լոյսը:

Երբ Աստուած վերադարձնէ մեր ժողովուրդի մոլորեալ զաւակները մեր Եկեղեցիին փարախը, այն ատեն պիտի տեսնէք, թէ մեզի համար ևս այլակերպեցաւ Տէրը և, ինչպէս իր աշակերտները, մեզ ևս լուսաւորեց իր լոյսով:

Այն ատեն բոլորս միասին պիտի ըսենք, փառք քեզ, Տէր, որ տուիր մեզի Ս. Գրիգոր Լուսաւորիչը, որ դրկեցիր մեզի Ս. Թաղէոս և Ս. Բարթողիմէոս Առաքեալները, որ քու ձեռքիդ ոսկի մուրճով իջար դէպի Այրարատեան մեր դաշտը և կառուցիր մեր Տաճարը, որ տուիր մեզի սուրբ Հայրապետներ, իմաստուն Հայրապետներ, որոնք միմէն այսօր, ինչպէս անոնց շատախղը՝ Տ. Վազգէն Սրբազան Կաթողիկոսը, պահեցին մեզ ճշմարտութեան ճամբուն մէջ:

Դուք ևս եթէ զգաք Պայծառակերպութեան տօնին խորհուրդը, երեք առաքեալներուն նման, պիտի ըսէք. «Բարոք է մեզ աստ լինել», որովհետեւ մեզի համար ևս լոյս է Յիսուս Քրիստոս, որուն փառք, յափտեանս, ամէն: